ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/85» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

- *Վայրը՝* *Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 224/2 սենյակ*
- *Օրը՝* *21.05.2018թ.*
- *Ժամը՝* *10:00*

Ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ իրենց որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

1. Ընդունել ի գիտություն, որ 03.05.2018 թվականին ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի նախատեսված տվյալների ճշտման մասին 1-ին և 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում է կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

15.05.2018 թվականին ստացվել է պատասխան՝ ըստ որի բոլոր մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող, բացառությամբ.

- «Կոմպասս» ՍՊԸ - հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ 1,866,258.0 (մեկ միլիոն ութ հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր հիսունութ) ՀՀ դրամի չափով:

Գնահատող հանձնաժողովը որոշեց «Կոմպաս» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար, մերժել և մասնակիցների կամ կոմիտեի կողմից նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը ներառյալ լրացուցիչ տեղեկատվություն չներկայացնելու դեպքում կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 44-րդ կետով սահմանված ընթացակարգը:

Ընդունվել է որոշում՝ *կողմ-5* *դեմ-0*

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հ/Հ	Ապրանքի անվանումը	1-ին տեղ զբաղեցրած մասնակցի		
		անվանումը	գնային առաջարկը	ԱԱՀ
6	6.Սեղանի համակարգիչ կոմպլեկտ	Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ	813,600.0	+

Ընդունվել է որոշում՝ *կողմ-5* *դեմ-0*

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ-ի մասով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն մասնակցի տվյալների ճշտման մասին հարցում կատարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, ինչպես նաև նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ *կողմ-5* *դեմ-0*

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ *Ն.Ղուկասյան*

Հանձնաժողովի անդամներ՝ *Ս.Ղարագյոզյան*

Օ.Մկրտչյան

Ա.Մովսեսյան

Ա.Տեր-Թորոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ *Ա. Վարդանյան*